ՍՓՅՈՒՌՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

Դառնում են մեր ակադեմիայի անդամներ

Ըստ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ԳԱԱ-ն մեծ նշանակություն է տալիս նաեւ Սփյուռքի գիտական ներուժի ներգրավման խնդրին:

«Սփյուռքի լավագույն գիտնականներին ընտրելու ենք մեր ակադեմիայի արտասահմանյան անդամներ, մի պայմանով, որ նրանք մասնակցեն մեր տարեկան ժողովներին, հանդես գան գիտական հաղորդումներով: Նպատակն է համատեղ ծրագրերի մշակումը, երիտասարդ կադրերի պատրաստման գործում աջակցությունը: Արդեն մեկ տարի է այդ հարցով զբաղվում ենք եւ 100-ից ավելի գիտնականներ մեծ ոգեւորությամբ արձագանքել են»,- տեղեկացրեց նա երեկ: